

Հանրային կրթություն, որին արժանի են Կալիֆորնիայի բոլոր աշակերտները՝

Հանրային կրթություն, որին արժանի են Կալիֆորնիայի բոլոր աշակերտները (The Public Education All California Students Deserve) դա հետազոտական մի փաստաթուղթ է՝ կազմված Կալիֆորնիայի Ուսուցիչների միության կողմից, որտեղ ուրվագծված են այն փորձված կրթական ռազմավարությունները, որոնք բարելավում և ուժեղացնում են աշակերտների ուսանումը, էական նշանակություն ունեն Կալիֆորնիայի բոլոր 9 միլիոն աշակերտներին որակյալ կրթությամբ ապահովելու գործընթացում, կառուցելու ավելի ամուր տեղական համայնքներ և օգնելու պահպանել մեր հանրային կրթությունը որպես մեր ժողովրդավարական հասարակության հիմնաքար:

Բազմակողմանի կրթություն՝

Մենք պետք է ավելի շատ ներդրումներ կատարենք ուսանման գործընթացներում, քան թեստավորման: Ներդնենք, որպեսզի ապահովենք, որ բոլոր աշակերտներին և դպրոցներին հասանելի են արվեստը, երաժշտությունը, թատրոնը, պարը, ֆիզիկական կրթությունը և տեխնիկական կրթության դասընթացները: Բոլոր աշակերտներին պետք է հասանելի լինեն աշխարհի լեզուները, առարկաների լայն ընտրությունը և առաջադիմական դասակարգման (advanced placement) դասընթացները: Յուրաքանչյուր դպրոց պետք է գրադարան ունենա իր գրադարանավարուհիների կազմով: Ստանդարտացված թեստավորման վրա կենտրոնացումը սահմանափակում է սպասելիքները և ուսանման գործընթացները: Ուսուցիչներին անհրաժեշտ է ազատություն, որպեսզի նրանք կիրառեն բազմազան ուսուցողական մեթոդներ, որոնք մշակութային տեսանկյունից կհամապատասխանեն իրենց կողմից դասավանդվող տարաբնույթ աշակերտների կարիքներին:



Դասարանի չափաքանակի նշանակություն ունի՝

Ամբողջ երկրում Կալիֆորնիայի դասարանները ամենամեծն են իրենց չափաքանակով, ինչը զգալիորեն խոչընդոտում է մեր աշակերտների ուսանելու և առաջադիմելու կարողություններին: Ավելի փոքր չափաքանակի դասարաններում ուսուցիչները ավելի շատ ժամանակ են ունենում անհատական ուսուցում ապահովելու համար, ինչը նշանակալիորեն բարելավում է աշակերտի ուսանման գործընթացը՝ մասնավորապես էթնիկ փոքրամասնությունների աշակերտների և անգլերեն սովորողների առումով, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչների և ընտանիքների միջև հաղորդակցման ավելի մեծ հնարավորություններ ստեղծել:



Նախադպրոցական կրթության հասանելիություն՝

Ուսանումը սկսվում է մինչև աշակերտի մանկապարտեզ մուտք գործելը: Կալիֆորնիայի բոլոր երեխաները արժանի են, որպեսզի բարձր որակի վաղ կրթությունը հասանելի լինի նրանց համար:

Ուսանելու և ուսուցանելու ապահով միջավայր՝

Աշակերտները պետք է ուսուցանվեն ապահով և բարեկարգ հաստատություններում, որտեղ հարգանք է ցուցաբերվում դպրոց հաճախողների և այնտեղ աշխատողների հանդեպ:

Բոլոր աշակերտների ուսուցանումը՝

Հասարակական արդարության, հավասարության և բազմազանության սկզբունքները միասնականորեն ձևավորում են հանրային կրթությունը Կալիֆորնիայում: Երեխայի հաջողության հասնելու հավանականությունը չպետք է կախված լինի նրա բնակության ճիշտ հասցեից: Ծնողները և ուսուցիչները գիտակցում են համակարգում առկա անհավասարությունները և շարունակում են լրացուցիչ միջոցներով աջակցել այն աշակերտներին և դպրոցներին, որոնք ունեն այդ լրացուցիչ աջակցության կարիքը:

Մասնագիտության առաջնորդում՝

Կրթական համակարգի մասնագետները խորապես նվիրված են յուրաքանչյուր աշակերտի հաջողությանը, քանի որ նրանք իրապես իրենց գործի բարձրակարգ փորձագետներ են և պատասխանատու են աշակերտների և իրենց մասնագիտության համար որակի բարձր չափանիշների սահմանման համար: Ուսուցիչները արժանի են ուսուցիչներին ուղղված մասնագիտական զարգացմանը, նրանք պետք կարողանան ժամանակ հատկացնել դասերի ծրագրմանը և իրենց գործընկերների հետ համագործակցելուն, ինչպես նաև համատեղ որոշումների կայացմանը՝ առավել արդյունավետ դասավանդման մեթոդների, դասացանկի, գնահատման համակարգերի ուղղությամբ որոշումներ կայացնելու նպատակով: Ուսուցիչները նաև պետք է ունենան այնպիսի աշխատավարձ, որը մրցունակ կլինի նույն կրթությունը և փորձը ունեցող այլոց հետ՝ որպեսզի հնարավոր լինի աշակերտների համար գրավել և պահպանել որակյալ ուսուցիչներին:

Ընտանիքի և համայնքի ներգրավվածությունը՝

Ծնողները և ընտանիքի անդամները երեխայի կրթության բաղկացուցիչ մասն են: Ուսուցիչները պետք է ժամանակ ունենան ծնողների հետ կանոնավոր կերպով հաղորդակցվելու համար՝ աշակերտի ուսանման համատեղ պատկերացումը ձևավորելու համար: Հանրակրթական դպրոցները պետք է հանդես գան որպես համայնքի և չափահասներին սովորեցնող կենտրոններ:

Առողջության և աջակցության ծառայություններ՝

Կալիֆորնիան վերջին տեղում է խորհրդականների, բուժքույրերի և հասարակական աշխատողների քանակով՝ բաշխված ըստ մեկ աշակերտի: Պատշաճ առողջապահական խնամքը, այդ թվում ակնաբուժական և ատամնաբուժական խնամքը, չափազանց կարևոր են ուսմանը պատրաստ երեխաների դպրոց հաճախելը ապահովելու համար: Անվճար և նվազեցված սննդի ծրագրերը և անվճար փոխադրամիջոցը պետք է հասանելի լինեն բոլոր նրանց համար, ովքեր ունեն դրա կարիքը: Կալիֆորնիայի դպրոցներին անհրաժեշտ են պատշաճ խորհրդականներ, բուժքույրեր և կրթությանը աջակցող այլ մասնագետներ՝ բոլոր երեխաների կարիքները բավարարելուն օժանդակելու համար:

Ամբողջությամբ ֆինանսավորվող կրթություն՝

Հանրային կրթությունը շարունակում է լինել մեր ժողովրդավարության հիմնաքարը և հավասարեցնող գործոնը: Կալիֆորնիան աշխարհում ութերորդ մեծ տնտեսությունն է, սակայն շարունակում է զբաղեցնել բավականին ցածր դիրքեր ազգային միջին մակարդակից՝ ըստ մեկ աշակերտի ֆինանսավորման չափանիշների: Հանրային կրթության մեջ ներդրումը դա ներդրում է մեր ապագայի մեջ:



Մատչելի քոլեջի և կարիերայի հասանելիություն՝

Բոլոր աշակերտները արժանի են մատչելի քոլեջ ընդունվելու հնարավորություն ունենալուն: Աշակերտներին պետք է նաև հասանելի լինեն կարիերայի և տեխնիկական վերապատրաստման ծրագրեր, ինչպես նաև այլ կրթական հնարավորություններ, որոնք կնախապատրաստեն նրանց աշխատանքային շուկային: